

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների 2021թ.-ի ինն ամիսների ամփոփագիր

2021թ-ի ինն ամիսների ընթացքում ստացվել է **988** դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 658 քաղաքացի: 521 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 75-ինը՝ մերժվել է, 62 քաղաքացի ստացել են պարենային օգնություն:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 56 քաղաքացի, բոլոր 56 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 7 դիմում է ստացվել, 1 դիմում մերժվել է և ևս 1-ին տրվել է ընթացք:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 17 քաղաքացի, 1 դիմում մերժվել է, մնացած դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 29 քաղաքացի, բոլորի խնդրանքը բավարարվել է:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 17 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ Հողաշինության հարցերով դիմած քաղաքացիներից 19-ին էլ տրվել է դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 13 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Ստացվել է այլ բնույթի 172 դիմում:

մարզպետարանի քարտուղարության

ընդհանուր բաժնի պետ

Թ. Գևորգյան